ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2014թ. **N __- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 146-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 14-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ Կազմակերպություն):
2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարային հանձնաժողով:
3. Լուծարային հանձնաժողովին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Կազմակերպության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:
4. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի «Թիվ 5 բուժսանմաս փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին» N 146-Ա որոշումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 146-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ-ն կազմավորվել է «Բազալտ» գործարանի աշխատողների բուժկանխարգելիչ սպասարկում իրականացնելու նպատակով և միաժամանակ սպասարկել է նաև Ջրվեժ թաղամասի բնակչությանը: Գործարանի գործունեության դադարելուց հետո բուժսանմասը շարունակել է սպասարկել Ջրվեժ թաղամասի ազգաբնակչությանը: 2006 թվականին «Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ-ն տեղափոխվել է Ջրվեժի Մայակ թաղամասում գտնվող թիվ 187 դպրոցի տարածք, որտեղ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցելու համար չունի համապատասխան լիցենզիա: Բացակայում է նաև նշված տարածքի օգտագործման իրավունքը հավաստող որևէ փաստաթուղթ: Այսինքն, տարիներ շարունակ բուժհաստատության կողմից մատուցվել են ծառայություններ՝ առանց տվյալի տարածքի օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի և տվյալ տարածքում բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի:

Բուժհաստատության կողմից մատուցվող ծառայությունները սահմանափակվում էր միայն թերապևտիկ ծառայություններով, չէին մատուցվում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչներով նախատեսված ծառայությունների ողջ ծավալը: Մասնավորապես՝ նեղ մասնագիտացված բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև լաբորատոր-գործիքային հետազոտությունների մասով պետական պատվերի պայմանագիր է կնքվել «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի հետ:

Բուժհաստատության կողմից սպասարկվող ազգաբնակչության թվաքանակը տարիների ընթացքում անընդհատ նվազել է: Այսպես, եթե 2012թ. բուժհաստատության կողմից սպասարկվող ազգաբնակչության թվաքանակը կազմել է 3569 մարդ, ապա 2013թ.՝ սպասարկվող անձանց թվաքանակը կազմել է 2402, իսկ հավաքագրված ազգաբնակչության թվաքանակը՝ 1060: Համաձայն ՀՀ կառավարության 26.12.2013թ N1515-Ն որոշման, 2014թ. հուլիսի 1-ից արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատությունների ֆինանսավորումն իրականացվելու է ըստ հավաքագրված ազգաբնակչության:

1060 հավաքագրված ազգաբնակչություն ունենալու դեպքում հնարավոր չէր լինի ապահովել բուժհաստատության բնականոն գործունեությունը և կհանգեցներ կրեդիտորական պարտքերի գոյացման, ուստի 2014թ. հունվարի 1-ից «Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ-ի սպասարկման տարածքի ազգաբնակչությունը կցագրվել է «Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին, իսկ «Թիվ 5 բուժսանմաս» ՓԲԸ-ի գործունեությունը դադարեցվել է:

Բուժհաստատության հետագա գործունեության ապահովման համար անհրաժեշտ է ստանալ բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա, որի համար ընկերությունը չունի համապատասխան տեխնիկական միջոցներ և կադրեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 146-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության լուծարման և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի N146-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԹԻՎ 5 ԲՈՒԺՍԱՆՄԱՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 146-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Թիվ 5 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության լուծարման և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 22-ի N146-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ